ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԴԱՍԸՆԹԱՑ 2.1

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

/քննության հարցեր/

Նոյեմբեր 2020թ.

Բաժին Ա

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր

1. Իրավաբանական անձի հիմնադիրները.

ա/ համապարտ պատասխանատվություն են կրում իրավաբանական անձի ստեղծման հետ կապված պարտավորությունների համար
բ/ բաժնային պատասխանատվություն են կրում իրավաբանական անձի ստեղծման հետ կապված պարտավորությունների համար
գ/ լիակատար պատասխանատվություն են կրում մինչև իրավաբանական անձի պետական գրանցումը ծագած՝ իրավաբանական անձի ստեղծման հետ կապված պարտավորությունների համար
դ/ համապարտ պատասխանատվություն են կրում մինչև իրավաբանական անձի պետական գրանցումը ծագած՝ իրավաբանական անձի ստեղծման հետ կապված պարտավորությունների համար

2. Ներկայացուցչություն է համարվում.

ա/ իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը
բ/ իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը
գ/ իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը
դ/ իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը

3. Փոխանցման ակտը և բաժանիչ հաշվեկշիռը պետք է դրույթներ պարունակեն վերակազմակերպված իրավաբանական անձի.

ա/ ակտիվների ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին՝ ներառյալ վիճարկվող պարտավորությունները
բ/ գույքի ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին՝ ներառյալ վիճարկվող պարտավորությունները
գ/ գույքի ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին՝ բացառությամբ վիճարկվող պարտավորությունները
դ/ ակտիվների ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին՝ բացառությամբ վիճարկվող պարտավորությունները

4. Լիակատար ընկերակցությանը մասնակցելուց հրաժարվելը պետք է հայտարարվի ընկերակցությունից մասնակցի դուրս գալուց.

ա/ առնվազն մեկ ամիս առաջ
բ/ առնվազն երեք ամիս առաջ
գ/ առնվազն վեց ամիս առաջ
դ/ ճիշտ պատասխանը բացակայում է

5. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքում մասնակցի բաժնեմասի վրա նրա անձնական պարտքերի համար բռնագանձում տարածել թույլատրվում է.

ա/ ընկերության մյուս մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում
բ/ միայն այդ մասնակցի պարտքերը մարելու համար այլ գույքի անբավարարության դեպքում
գ/ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ
դ/ առանց պայմանի

6. Բաժնետիրական ընկերությունում ո՞ր դեպքում է պարտադիր տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) ստեղծումը.

ա/ երբ բաժնետերերի քանակը երեսունից ավելի է
բ/ երբ բաժնետերերի քանակը հիսունից ավելի է
գ/ երբ բաժնետերերի քանակը հարյուրից ավելի է
դ/ բաժնետիրական ընկերությունը առանց նախապայմանի պարտադիր պետք է ունենա տնօրենների խորհուրդ

7. Անբաժանելի է համարվում այն գույքը, որը.

ա/ չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոփոխման կամ ենթակա չէ բաժանման օրենքի ուժով
բ/ չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոփոխման կամ ենթակա չէ բաժանման ՀՀ Կառավարության որոշումներով
գ/ անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու
դ/ չի կարող բաժանվել առանց դրա արժեքի որոշման

8. Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե.

ա/ այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար
բ/ այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, թեև կա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար

գ/ այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն՝ անկախ նրանից, թե տեղեկատվություն ունեցողը միջոցներ ձեռնարկում է գաղտնիության պահպանման համար

դ/ այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար

9. Ըստ ներկայացնողի արժեթուղթը, որը հավաստում է ապրանքային պահեստի կողմից ապրանքն ի պահ ընդունելը, կոչվում է.

ա/ կոնոսամենտ

բ/ հասարակ պահեստային վկայագիր

գ/ երկակի պահեստային վկայագիր

դ/ մուրհակ

10. Ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը.

ա/ որը կառուցել է տվյալ ինքնակամ կառույցը

բ/ որն առաջինն է դիմել սեփականության իրավունքի ճանաչման պահանջով

գ/ որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը

դ/ որը հինգ տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք

11. Կոշտ գրավ է համարվում այն գրավը.

ա/ որի առարկան թողնվում է գրավառուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով

բ/ որի առարկան թողնվում է գրավառուի մոտ և որի նկատմամբ գրավի իրավունքը գրանցված է օրենքով սահմանված կարգով

գ/ որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով

դ/ որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով, ինչպես նաև գրավատուի մոտ թողնված գրավի առարկան կամ որի նկատմամբ գրավի իրավունքը գրանցված է օրենքով սահմանված կարգով

12. Կեղծ է համարվում այն գործարքը, որը.

ա/ նոտարական կարգով վավերացված չէ

բ/ կնքվել է մեկ այլ գործարքի քողարկման նպատակով

գ/ կնքվել է առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության

դ/ կնքվել է գործունակ, սակայն գործարքի կնքման պահին այնպիսի վիճակում գտնվող անձի հետ, որն ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք

13. Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից.

ա/ մեկ ամսվա ընթացքում
բ/ երեք ամսվա ընթացքում
գ/ մեկ տարվա ընթացքում
դ/ երեք տարվա ընթացքում

14. Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի.

ա/ աշխատողը պարտավորվում է գործատուի անունից և նրա համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ

բ/ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ

գ/ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ

դ/ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ իր հայեցողությամբ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ

15. Նշվածներից որը չի համարվում աշխատանքի էական պայման.

ա/ աշխատանքի վայրը
բ/ պաշտոնի անվանումը
գ/ աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմը
դ/ կազմակերպության կազմակերպաիրավական ձևը

16. Աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու առանց գործատուի համաձայնության.

ա/ ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում
բ/ ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք օրվա ընթացքում
գ/ ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում
դ/ ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ տասն օրվա ընթացքում

17. Աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը, չի կարող անցնել.

ա/ օրական 8 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 40 ժամից
բ/ օրական 10 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 60 ժամից
գ/ օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից
դ/ օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 60 ժամից

18. Աշխատանքային տարում, որի համար տրամադրվում է ամենամյա արձակուրդ, չեն ներառվում.

ա/ աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը
բ/ վճարովի ամենամյա արձակուրդի ժամանակահատվածը
գ/ օրինական գործադուլի ժամանակահատվածը
դ/ չվճարվող արձակուրդի ժամանակահատվածը

19. Կարգապահական տույժը.

ա/ չի կարող բողոքարկվել աշխատողի կողմից
բ/ կարող է բողոքարկվել գործատուին՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում
գ/ կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում
դ/ կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում

20. Նշված պնդումներից որն է ճիշտ.

ա/ լիցենզիան տրվում է միայն լիցենզավորման ենթակա գործունեության յուրաքանչյուր տեսակի համար
բ/ լիցենզիան տրվում է լիցենզավորման ենթակա գործունեության բոլոր տեսակների համար միաժամանակ
գ/ լիցենզիան տրվում է լիցենզավորման ենթակա գործունեության տվյալ խմբի բոլոր տեսակների համար
դ/ լիցենզիան տրվում է բացառապես լիցենզավորման ենթակա գործունեության տվյալ դասի յուրաքանչյուր տեսակի համար

21. Որոշակի ժամկետով կամ որոշակի պայմաններով լիցենզավորված անձին լիցենզավորման ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումը կոչվում է.

ա/ լիցենզիայի հայտի մերժում
բ/ լիցենզիայի գործողության կասեցում
գ/ լիցենզիայի գործողության դադարեցում
դ/ լիցենզիայի վերաձևակերպում

22. Բաժնետիրական ընկերության հիմնադիր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում են տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների, ինչպես նաև բաժնետերերի.

ա/ 1/2-ը
բ/ 2/3-ը
գ/ 3/4-ը
դ/ 4/5-ը

23. Բաժնետիրական ընկերության տարեկան ժողովը գումարվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո.

ա/ մեկ ամսվա ընթացքում
բ/ երկու ամսվա ընթացքում
գ/ երեք ամսվա ընթացքում
դ/ վեց ամսվա ընթացքում

24. Միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ (եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք), վարչական մարմինների կողմից անհավասար մոտեցում ցուցաբերելու սահմանափակումը վերաբերում է.

ա/ վարչարարության համաչափությանը
բ/ կամայականության արգելքին
գ/ հայեցողական լիազորությունների սահմանափակմանը
դ/ առավելագույնի սկզբունքին

25. Նշվածներից ո՞րը վարչական վարույթի փուլ չէ.

ա/ հարուցման փուլ
բ/ նախաքննության փուլ
գ/ ընթացիկ փուլ
դ/ եզրափակիչ փուլ

Ընդամենը 50 միավոր

ԲԱԺԻՆ Բ. ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

Խնդիր 1 /12 միավոր/

«ՖԱՅՎ ՖՐԵՆԴՍ» ՓԲԸ-ի (Ընկերություն) կանոնադրական կապիտալի թվով 90 բաժնետոմսերը սեփականատերերի միջև բաշխված են հետևյալ կերպ.

Արմեն Արարատյան – 10 բաժնետոմս
Բաբկեն Բագրատունի – 8 բաժնետոմս
Գաբրիել Գասպարյան – 30 բաժնետոմս
Դավիթ Դեմիրճյան – 22 բաժնետոմս
Եղիշե Եփրեմյան – 20 բաժնետոմս

2020 թվականի փետրվարի 27-ին տեղի է ունենում Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում են Ընկերության բոլոր բաժնետերերը՝ բացառությամբ Եղիշե Եփրեմյանի, ով երկրում չլինելու պատճառով չի կարողանում մասնակցել ժողովի աշխատանքներին, սակայն օրենքով սահմանված կարգով լիազորագիր է տալիս Դավիթ Դեմիրճյանին՝ ժողովում իր շահերը ներկայացնելու համար։

Օրակարգային առաջին հարցի՝ Ընկերության տարեկան հաշվետվության ներկայացման ժամանակ Ընկերության տնօրենը նշում է, որ Ընկերության ակտիվները կազմում են 5.2 մլրդ. ՀՀ դրամ, ընթացիկ տարվա զուտ շահույթը՝ 617 մլն. ՀՀ դրամ։ Գործունեության մանրամասն ներկայացումից պարզ է դառնում, որ 2019թ. դեկտեմբերի 23-ին 535 մլն. ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով Ընկերության արտադրական № 2 մասնաշենքը 575 մլն. ՀՀ դրամով վաճառվել է Ընկերության խորհրդի նախագահի որդուն։ Այս փաստը վրդովեցնում է Ընկերության բաժնետեր Բաբկեն Բագրատունուն, ով ժողովի ժամանակ հարցնում է, թե արդյոք առկա է անկախ գնահատողի եզրակացություն վաճառված անշարժ գույքի շուկայական արժեքի վերաբերյալ։ Ի պատասխան հարցադրմանը՝ Ընկերության տնօրենը տեղեկացնում է, որ գործարքը կնքվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, գործարքի վերաբերյալ դրական եզրակացություն է ներկայացրել Ընկերության խորհուրդը, և քվեարկությանը խորհրդի նախագահը՝ որպես շահագրգռվածություն ունեցող անձ, չի մասնակցել, իսկ ինչ վերաբերում է եզրակացությանը, ապա անկախ գնահատողի եզրակացության կարիք չի եղել, քանի որ անշարժ գույքը վաճառվել է հաշվեկշռային արժեքից ավելի բարձր արժեքով։ Բաբկեն Բագրատունին իր ելույթում նշում է, որ Ընկերության խորհրդի նախագահը փաստացի չարաշահել է բաժնետերերի վստահությունը, իր պաշտոնական դիրքն օգտագործելով ներազդել է խորհրդի մյուս անդամների վրա և ի վնաս Ընկերության՝ հօգուտ իր որդու ապօրինի գործողություններ է իրականացրել։ Նա նշում է, որ ժողովը պետք է համապատասխան որոշում ընդունի՝ չեղարկելու նշյալ գործարքը։

Գործարքի չեղարկման օգտին քվեարկում են Բաբկեն Բագրատունին և Դավիթ Դեմիրճյանը։

Օրակարգի հաջորդ հարցի՝ Ընկերության խորհրդի անդամների ընտրության ժամանակ Դավիթ Դեմիրճյանն առաջարկում է լուծարել խորհուրդը, որպեսզի հետագայում բացառվեն նախորդ հարցի քննարկման ժամանակ բացահայտված չարաշահումները։ Արմեն Արարատյանը նշում է, որ բաժնետիրական ընկերությունների համար խորհուրդ ունենալն օրենսդրության պահանջ է, ուստի իրենք հնարավորություն չունեն լուծարել կառավարման այդ մարմինը։ Բաբկեն Բագրատունին ասում է, որ ինքն անձամբ պետք է անպայման լինի խորհրդի կազմում և պնդում է, որ որպես Ընկերության բաժնետեր, խորհրդի կազմում պետք է ընդգրկվի առանց քվեարկության։

Հարց 1. Քննարկեք Ընկերությանը պատկանող արտադրական № 2 մասնաշենքի վաճառքի օրինականությունը՝ անդրադառնալով Բաբկեն Բագրատունու և Ընկերության տնօրենի բերած փաստարկներին։

/5 միավոր/

Հարց 2. Իրավունք ունե՞ր արդյոք Ընկերության ժողովն արտադրական № 2 մասնաշենքի վաճառքի գործարքը չեղարկել։ Քվեարկության արդյունքում ի՞նչ որոշում կայացվեց։

/2 միավոր/

Հարց 3. Ներկայացրեք Ընկերության խորհրդի առնչությամբ Դավիթ Դեմիրճյանի և Արմեն Արարատյանի տեսակետների իրավական հիմնավորվածությունը։ Արդյո՞ք Բաբկեն Բագրատունին իրավունք ունի առանց քվեարկության ընդգրկվել խորհրդի կազմում։

/5 միավոր/

Խնդիր 2 /10 միավոր/

«ԱՐՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (Ընկերություն) աշխատակից Վաղինակ Արմենակյանը 2006 թվականի մայիսի 1-ից աշխատում է ընկերությունում, ընդ որում 2009 թվականի նոյեմբերի 1-ից՝ որպես արտադրամասի պետ։ 2020 թվականի փետրվարի 12-ին Ընկերության մի խումբ աշխատակիցներ Ընկերության տնօրենին տեղեկացնում են, որ արտադրամասի պետ Վաղինակ Արմենակյանն աշխատավայրում գտնվել է ոչ սթափ վիճակում, իր ենթակայությամբ աշխատող անձանց վիրավորել է և դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ։ Գործարանի տարածքի տեսահսկման համակարգի միջոցով իրականացված ձայնագրությունների վերծանման արդյունքում անվտանգության աշխատակիցները պարզում են աշխատակիցների խոսքերի ճշմարտացիությունը և համապատասխան ձայնագրությունը տրամադրում են տնօրենին։ Ձայնագրությունից պարզ երևում է, թե ինչպես է Վաղինակ Արմենակյանը արտադրամասում ցուցաբերում ոչ պատշաճ վարքագիծ, իսկ դրանից մոտ մեկ ժամ առաջ էլ ընդմիջման ժամին՝ ծածուկ կերպով օգտագործում օղի։

Ընկերության տնօրենի հետ զրույցում Վաղինակ Արմենակյանը սկզբում հերքում է իր՝ աշխատավայրում ոչ սթափ վիճակում գտնվելու հանգամանքը՝ պնդելով, որ որևէ ոգելից խմիչք չի օգտագործել, իսկ աշխատակիցների հետ իր կոպիտ խոսելը բխել է բացառապես աշխատանքային կարգապահությունը պահպանելու նկատառումներից ելնելով, որպեսզի վերջիններս առավել զգոն լինեն և սխալներ թույլ չտան։ Սակայն ձայնագրությունը տեսնելուց հետո հասկանում է, որ հերքելն անիմաստ է և ընդունում է իր մեղքը՝ նշելով, որ իր կինն առողջական լուրջ խնդիրներ ունի, գտնվում է հիվանդանոցում, ուստի ընկճված հոգեվիճակը թեթևացնելու նպատակով է աշխատանքի վայրում օղի օգտագործել։ Վաղինակ Արմենակյանը խնդրում է ներել իրեն և հնարավորություն տալ հետագա արդյունավետ աշխատանքով նպաստել Ընկերության գործունեության զարգացմանը։

Ընկերության տնօրենը նշում է, որ ինքն այլևս չի հավատում Վաղինակին և վերջինիս ազատում է աշխատանքից՝ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով։ Վաղինակ Արմենակյանը դիմում է դատարան Ընկերության տնօրենի՝ իրեն աշխատանքից ազատելու հրամանը չեղյալ համարելու պահանջով։ Վաղինակ Արմենակյանը հայցադիմումում վկայակոչել է հետևյալ փաստարկները.

ա/ Ընկերության տնօրենը, իմանալով ոգելից խմիչք օգտագործելու պատճառները, այդուհանդերձ դրսևորել է ոչ մարդասիրական վերաբերմունք։ Որպես ապացույց՝ հայցադիմումին կցվել է բժշկական տեղեկանք, որում նշված է, որ Վաղինակ Արմենակյանի կինը՝ Արփի Պապիկյանը, 2020 թվականի փետրվարի 8-ից գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, անգիտակից վիճակում և որ հիվանդի վիճակը գնահատվում է ծայրահեղ ծանր։

բ/ Ընկերության տնօրենը, առանց նկատողություն կամ խիստ նկատողություն կարգապահական տույժ կիրառելու, միանգամից արձակել է ազատման հրաման։

գ/ Ինքը չի ծանուցվել աշխատանքից ազատման մասին։

դ/ Ինքն ունի Ընկերությունում աշխատանքի ավելի քան 10 տարվա աշխատանքային փորձ, և 2017 թվականին արգասաբեր աշխատանքի համար արժանացել է Ընկերության լավագույն աշխատակցի պատվոգրին:

Հարց 1. Արդյո՞ք Ընկերության տնօրենի գործողությունները համապատասխանում են ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին:

/4 միավոր/

Հարց 2. Գնահատեք Վաղինակ Արմենակյանի հայցադիմումում վկայակոչված փաստարկների հիմնավորվածությունը:

/6 միավոր/

Խնդիր 3 /10 միավոր/

«ՀԵՓԻ ՄԱՆՔԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերություն) զբաղվում է տնտեսական ապրանքների ներմուծմամբ ու վաճառքով և հաճախակի մասնակցում է պետական գնումների մրցույթների: Գործունեության ընթացքում Ընկերությունը պարբերաբար ունենում է հավելյալ շրջանառու միջոցների ներգրավման կարիք: Բացի այդ, մատակարարումն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, Ընկերությունը նախատեսում է ձեռք բերել նոր բեռնատար մեքենա, ինչպես նաև ստանալ բանկային երաշխիքներ՝ պետական գնումների գործընթացին մասնակցելու համար: Նշված ֆինանսական ռեսուրսների անբավարարության խնդիրը լուծելու համար Ընկերությունը դիմում է «ՎԻԹԻ ԿԱՊԻՏԱԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (Բանկ): Բանկը դիտարկում է Ընկերության հայտը, գնահատում վարկունակությունը և նշում, որ բացի Ընկերության հաշվեկշռում առկա երեք բեռնատար մեքենաների գրավը, անհրաժեշտ է նաև մեկ անձի երաշխավորություն: Ընկերության տնօրեն և միակ մասնակից Գոռ Վերանյանը դիմում է իր մանկության ընկեր Վաղինակ Ապրեսյանին (ով որպես անհատ ձեռնարկատեր զբաղվում է ժամանցային միջոցառումների կազմակերպմամբ)՝ խնդրելով հանդես գալ որպես երաշխավոր: Վաղինակ Ապրեսյանը համաձայնում է օգնել ընկերոջը:

Արդյունքում՝ Բանկի և Ընկերության միջև 14.01.2020թ. կնքվում է թիվ 007 գլխավոր վարկային պայմանագիրը, որով Բանկը պատրաստակամություն է հայտնում Ընկերությանը տրամադրել մինչև 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր գումարով վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ և բանկային երաշխիքներ:

Նույն օրը՝ 14.01.2020թ., 5 տարի մարման ժամկետով կնքված 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամի թիվ 141-007/Վ վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների (վարկի մայր գումարի, տոկոսների և դրանց ուշացման համար նախատեսված տույժերի և տուգանքների) կատարման ապահովման համար Բանկի, Ընկերության և Ա/Ձ Վաղինակ Ապրեսյանի միջև կնքվում է թիվ 007/Ե երաշխավորության պայմանագիրը, համաձայն որի Ա/Ձ Վաղինակ Ապրեսյանը պարտավորվում է պատասխանատվություն կրել 14.01.2020թ. կնքված թիվ 007 գլխավոր վարկային պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների համար՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով, բոլոր բանկերում սպասարկվող հաշվարկային, ընթացիկ, արտարժույթային, ավանդային և այլ հաշիվներին առկա գումարներով: Թիվ 007/Ե երաշխավորության պայմանագրով ամրագրվում է նաև, որ երաշխավորությունը գործում է մինչև պարտավորությունների ամբողջական կատարումը:

Վարկի ներգրավումից երեք օր անց՝ 17.01.2020թ., պարզվում է, որ բեռնատար մեքենայի ձեռքբերման համար նախապես պայմանավորված գինն ավելացել է և անհրաժեշտ է ներգրավել լրացուցիչ ևս 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ինչի կապակցությամբ էլ այդ օրը Բանկի և Ընկերության միջև կնքվում է թիվ 141-007/Վ վարկային պայմանագրին կից համաձայնագիր, համաձայն որի Ընկերությանը տրամադրվում է անհրաժեշտ 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ վարկը:

Երկու ամիս անց՝ նոր կորոնավիրուսային տեսակի համավարակով պայմանավորված, Ընկերության իրացման ծավալները կտրուկ նվազում են, ինչի հետևանքով Ընկերությունը չի կարողանում իր վարկային պարտավորությունները պատշաճ կատարել, ժամանակին և ամբողջ ծավալով իրականացնել վարկային պայմանագրով նախատեսված վճարումները: Բանկը ծանուցում է Ընկերությանը (Վարկառուին) և Ա/Ձ Վաղինակ Ապրեսյանին (Երաշխավորին)՝ պարտավորությունները վաղաժամկետ և ամբողջությամբ կատարելու պահանջի մասին՝ տալով տասնօրյա ժամկետ: Գոռ Վերանյանը սկսում է խուսափել իր մանկության ընկեր Վաղինակ Ապրեսյանի հետ հանդիպումներից՝ չպատասխանելով նույնիսկ նրա հեռախոսազանգերին:

Բանկը դիմում է դատարան՝ Վարկառուից և Երաշխավորից համապարտության կարգով վարկի մայր գումարն ու տոկոսները, ինչպես նաև տույժերն ու տուգանքները (ընդհանուր՝ 24,980,000 ՀՀ դրամ) բռնագանձելու պահանջով: Երաշխավոր Ա/Ձ Վաղինակ Ապրեսյանն առարկում է հայցի դեմ, ինչին ի պատասխան՝ դատարանը որոշում է կայացնում բռնագանձում տարածել միայն Վարկառուի գույքի վրա:

Հարց 1. Դատարանն ի՞նչ հիմնավորմամբ կարող էր Ա/Ձ Վաղինակ Ապրեսյանի առարկությունը բավարարել և վերջինի գույքի վրա բռնագանձում չտարածել:

/4 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք երաշխավորության էությունը՝ որպես պարտավորությունների կատարման ապահովում:

/6 միավոր/

Խնդիր 4 /10 միավոր/

Սևակ Ավագյանը մասնագիտությամբ շինարար է և պատվերով իրականացնում է շինարարական աշխատանքներ: Մասնագիտական գիտելիքների և աշխատանքին բծախնդիր վերաբերմունքի շնորհիվ տարիների ընթացքում ձեռք է բերում լավ շինարարի համբավ և մշտապես պատվերներ է ունենում: 2015 թվականի հուլիսի 11-ին իր ընկերներ Հովհաննես Թամամյանի և Ավետիք Իսկոյանի հետ հանդիպման ժամանակ պատմում է, որ շինարարական տեխնիկայի բավական մեծ պահանջարկ կա, և որ բազմաթիվ ընկերություններ վարձակալում են իրենց անհրաժեշտ շինարարական տեխնիկան: Ուստի շինարարական տեխնիկա գնելը և վարձակալությամբ այն հանձնելը բավականին եկամտաբեր է: Այս միտքը հետաքրքրում է ընկերներին և որոշում են իրենց խնայողությունների հաշվին համատեղ ձեռք բերել վերամբարձ կռունկ՝ 60 մլն. ՀՀ դրամով: Ընկերներից յուրաքանչյուրը ներդնում է 20 մլն. ՀՀ դրամ՝ ձեռք բերելով 33.33% կռունկի նկատմամբ բաժնային սեփականության իրավունք: Ինչպես և նախապես պլանավորվել էր՝ Սևակն իր կապերի շնորհիվ կարողանում է կռունկը վարձակալության հանձնել տարբեր ընկերությունների, ինչի արդյունքում ինքը՝ ընկերների հետ միասին, վաստակում են կայուն գումար:

2019 թվականի հոկտեմբերի 7-ին շինարարական հրապարակում տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում Սևակ Ավագյանը մահանում է: Օրենսդրության համաձայն՝ նրա ժառանգ են ճանաչվում կինը՝ Սվետլանա Ավագյանը և երկու որդիները՝ Տիգրանը և Տրդատը: Արդյունքում վերամբարձ կռունկի՝ Սևակ Ավագյանին պատկանող բաժնեմասը ժառանգությամբ անցնում է Սվետլանային, Տիգրանին և Տրդատին: Քանի որ Սևակ Ավագյանի ընտանիքը նրա մահից հետո գտնվում է սոցիալական բարդ իրավիճակում՝ Սվետլանան, Տիգրանը և Տրդատը որոշում են իրենց բաժինները վաճառել: 2020 թվականի փետրվարի 2-ին Սվետլանան իր երկու որդիների հետ իրենց բաժինները վաճառելու մտադրության մասին գրավոր ծանուցում են Սևակի ընկերներին՝ որպես վաճառքի ընդհանուր գին նշելով 12 մլն. ՀՀ դրամ: Ի պատասխան ծանուցման՝ Հովհաննես Թամամյանը հինգ օր անց հայտնում է, որ քանի որ ինքը ժամանակ չունի գույքի վարձակալությամբ հանձնելու հետ կապված հարցերով զբաղվելու, 2019 թվականի դեկտեմբերի 26-ին իր բաժնեմասը պարտքի դիմաց զիջել է քաղաքացի Վահագն Արշակյանին: Կռունկի մյուս սեփականատեր Ավետիք Իսկոյանը ծանուցմանը պատասխանում է, որ ինքը ուզում է շարունակել տեխնիկայի վարձակալման հանձնման բիզնեսը և պատրաստ է գնել Սևակի ընտանիքին պատկանող բաժնեմասը, սակայն կարծում է, որ 12 մլն. ՀՀ դրամը գերագնահատված է, ուստի առաջարկում է 8.5 մլն. ՀՀ դրամ: Մի քանի օր անց Ավետիք Իսկոյանն իմանում է, որ Հովհաննես Թամամյանն իր բաժնեմասը պարտքի դիմաց զիջել է այլ անձի, վրդովված լինելով Հովհաննեսի գործողություններից, պահանջում է որպեսզի վերջինս քայլեր ձեռնարկի բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը դրամական փոխհատուցման դիմաց իրեն փոխանցելու ուղղությամբ, հակառակ դեպքում սպառնում է, որ կդիմի դատարան Հովհաննեսի և Վահագնի միջև կնքված գործարքն անվավեր ճանաչելու պահանջով՝ հիմք ընդունելով այն, որ բաժնեմասն օտարվել է՝ առանց իր և մյուս սեփականատերերի համաձայնության: Ի պատասխան դրան՝ Հովհաննեսը նշում է, որ ինքը չի կարող կատարել Ավետիքի պահանջը:

Ավելին՝ որևէ մեկից համաձայնություն ստանալու որևէ պարտավորություն չի ունեցել, քանի որ խոսքը վերաբերում է ոչ թե անշարժ գույքի, այլ շարժական գույքի բաժնեմասի օտարման, հետևապես գործարքն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հարց 1. Բնութագրեք բաժնային սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունների իրավաչափությունը: Ի՞նչ քայլեր կարող է ձեռնարկել Ավետիք Իսկոյանը վերամբարձ կռունկի 100 տոկոս բաժնեմասն ունենալու համար:

/4 միավոր/

Հարց 2. Բնութագրեք ընդհանուր սեփականության ծագման հիմքերն ու բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու իրավական կարգավորումները: Սեփականության իրավունքի դադարման ինչպիսի՞ հիմքեր են նախատեսվում օրենսդրությամբ:

/6 միավոր/

Խնդիր 5 /8 միավոր/

«ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերությունն (Ընկերություն) իրականացնում է բազմաբնակարան շենքի կառուցապատում Երևան քաղաքի Արհեստագործների փ. 11/1 հասցեում: Ընկերությունը կառուցվող շենքի բնակարանների վաճառքի պայմանագրերի կնքման իրավունքը գործակալական հիմունքներով փոխանցում է անշարժ գույքի առուվաճառքի գործունեություն իրականացնող «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Ընկերության և «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի միջև կնքվում է գործակալության պայմանագիրը: Գործակալության պայմանագրով ամրագրվում է, որ գործակալը պարտավորվում է վարձատրությամբ պրինցիպալի հանձնարարությամբ, պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել ք. Երևան, Արհեստագործների փ. 11/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարանների վաճառքի նախնական և վերջնական պայմանագրերի կնքման և դրանցից բխող անհրաժեշտ այլ իրավաբանական գործողություններ: Պայմանագրով գործակալին տրվում է վերը նշված գործողությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր լիազորությունները: Որպես գործակալական վարձատրություն սահմանվում է գնորդներից հավաքագրված գումարների 10%-ը:

2018թ. ապրիլի 10-ին «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ն քաղաքացի Կիրակոս Վշտունու հետ կնքում է նախնական պայմանագիր նշված բազմաբնակարան շենքի 7-րդ հարկում գտնվող 78 քմ. մակերեսով թիվ 22 բնակարանը 33 մլն. ՀՀ դրամով վաճառելու վերաբերյալ: Պայմանագրի համաձայն՝ Կիրակոս Վշտունին պայմանագրի կնքման օրը որպես կանխավճար վճարում է բնակարանի արժեքի 40 տոկոսը՝ 13.2 մլն. ՀՀ դրամ, իսկ մնացած գումարը պարտավորվում է վճարել շենքը շահագործման հանձնելուց հետո 30 օրվա ընթացքում:

2019թ. սեպտեմբերի 1-ին Ընկերության գործունեությունը ֆինանսավորող առևտրային բանկը 200 մլն. ՀՀ դրամ 4 ամիս ժամկետանց պարտավորությունների համար դիմում է դատարան՝ Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջով: Դատարանը բավարարում է բանկի ներկայացրած հայցը, և Ընկերությունը 2019թ. դեկտեմբերի 15-ին դատարանի որոշմամբ ճանաչվում է սնանկ: Սնանկության մասին տեղեկատվությունը շենքի այլ գնորդներից իմանալուն պես, Կիրակոս Վշտունին դիմում է «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ին՝ գործարքի հետագա ճակատագիրը հասկանալու համար: «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի տնօրեն Վռամ Իշխանյանը տեղեկացնում է, որ իրենք ընդամենը միջնորդ կազմակերպություն են և ունեն կնքված գործակալության պայմանագիր սնանկ ճանաչված Ընկերության հետ, ուստի և չեն կարող պատասխանատվություն կրել իրենց գործընկերոջ ֆինանսական խնդիրների պատճառով: Վռամ Իշխանյանը Կիրակոս Վշտունուն ասում է, որ վճարված 13.2 մլն. ՀՀ դրամի ընդամենը 10%-ն է եղել իր կազմակերպության եկամուտը և ավելացնում, որ ցավում է տեղի ունեցածի համար, և որ ինքն ու իր կազմակերպությունը որևէ բանով նրան օգնել չեն կարող: Վռամ Իշխանյանը նաև նշում է, որ Կիրակոս Վշտունին, իմանալով կառուցապատող Ընկերության սնանկության գործընթացի վերաբերյալ, պետք է ավելի վաղ իր պահանջը ներկայացներ դատարան՝ պարտատերերի ընդհանուր ցուցակում ընդգրկվելու նպատակով: Ու քանի որ դա էլ չի կատարվել, պետք է համակերպվի տեղի ունեցածի հետ: Կիրակոս Վշտունին ասում է, որ անպայման դիմելու է դատարան՝ իր կրած վնասների փոխհատուցման պահանջով:

Ավելին՝ նա նշում է, որ անշարժ գույքի շուկայում բնակարանների գները բարձրացել են, և ինքը նույնանման բնակարանն այլևս չի կարող գնել 33 մլն. ՀՀ դրամով, այլ՝ առնվազն 40 մլն. ՀՀ դրամով, ուստի և այդ 7 մլն. ՀՀ դրամի տարբերությունը ևս՝ որպես պատճառված վնաս, պահանջելու է «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ից:

Կիրակոս Վշտունին դիմում է դատարան՝ «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ից պահանջելով 20.2 մլն. ՀՀ դրամ՝ որպես վճարված 13.2 մլն. ՀՀ դրամ գումարի և պատճառված 7 մլն. ՀՀ դրամ վնասի փոխհատուցում:

Հարց 1. Դատարանը կընդունի՞ արդյոք «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի դեմ Կիրակոս Վշտունու հայցը: Պատասխանը հիմնավորել:

/4 միավոր/

Հարց 2. Նկարագրեք խնդրի հանգուցալուծումը՝ նշելով թե 2 ընկերություններն ու քաղաքացի Կիրակոս Վշտունին ինչ փոխադարձ պահանջներ կարող են ներկայացնել միմյանց նկատմամբ:

/4 միավոր/

Ընդամենը 50 միավոր